Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 4-ի N 288 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ձևաբանական հետազոտությունների անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն որոշման N 1 հավելվածով հաստատված ցանկի ձևաբանական հետազոտությունները կատարվում են ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն)՝ «ախտաբանական անատոմիա և կլինիկական մորֆոլոգիա» մասնագիտությամբ համապատասխան մասնագետի (այսուհետ՝ ախտաբանաանատոմ) կողմից՝ բացառությամբ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի, որը կատարվում է նաև լաբորատոր-ախտորոշիչ (բջջաբանական) բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող հաստատություններում՝ «կլինիկական բջջաբանություն» մասնագիտությամբ համապատասխան մասնագետի (այսուհետ՝ բջջաբան) կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

2. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3. Ձևաբանական հետազոտությունների շրջանակներում ուսումնասիրվում են՝

1) վիրահատական բիոպսիոն նյութը.

2) ախտորոշիչ բիոպսիոն նյութը.

3) նուրբ ասեղային ասպիրատներ և ասեղային բիոպտատները.

4) լորձաթաղանթների քսուքները, արտատպվածքները.

5) ֆիզիոլոգիական հեղուկները և մարմնում ախտաբանական կուտակված հեղուկները.

6) վիրահատական և աուտոպսիոն նյութի թաց արխիվը.

7) պատրաստի պարաֆինային բլոկներ, պատրաստի հյուսվածաբանական ապակիները.

8) բժշկական փաստաթղթերը:

4. Ձևաբանական հետազոտությունները (հետազոտվող նյութը լաբորատորիայում գրանցվելու պահից) անցկացվում են հետևյալ ժամկետներում՝

1) բջջաբանական ձևաբանական հետազոտությունը՝ մինչև 2 աշխատանքային օր՝ կախված հետազոտվող նյութի բնույթից.

2) սույն որոշման N 1 հավելվածի ցանկի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված ձևաբանական հետազոտությունները՝ 3-15 աշխատանքային օր՝ կախված հետազոտվող հյուսվածքի տեսակից և հետազոտման մեթոդից:

5. Էլեկտրոնային միկրոսկոպիկ ձևաբանական հետազոտության համար ժամկետ նախատեսված չէ:

6. Ձևաբանական հետազոտությունների արդյունքներն արտացոլվում են ձևաբանական հետազոտության եզրակացության մեջ, որի օրինակելի ձևը և լրացման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ղեկավարը:

7. Ձևաբանական հետազոտության եզրակացությունը կազմվում է երկու օրինակից: Առաջին օրինակը տրամադրվում է պացիենտին կամ նրա ծնողին կամ ամուսնուն կամ երեխաներին կամ օրինական ներկայացուցչին կամ կոնտակտային անձին կամ բուժող բժշկին, իսկ երկրորդ օրինակը (էլեկտրոնային կամ թղթային ձևով) պահպանվում է հաստատությունում:

8. Ձևաբանական հետազոտության եզրակացությունն ստորագրվում է հետազոտող ախտաբանաանատոմի կամ բջջաբանի կողմից:

9. Ձևաբանական հետազոտության եզրակացությունը տրամադրվում է ձևաբանական հետազոտության ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

10. Ձևաբանական հետազոտությունից հետո պատրաստի հյուսվածքաբանական ապակիները և պարաֆինային բլոկները պահպանվում են (արխիվացվում են) հաստատությունում առնվազն հինգ տարի ժամկետով՝ բացառությամբ բջջաբանական ապակիների և թաց արխիվի (առկայության դեպքում), որի դեպքում արխիվացումը կատարվում է 1 տարի ժամկետով:

11. Սույն կարգի 10-րդ կետի ժամկետները լրանալուց հետո նյութերը ոչնչացվում են որպես բժշկական թափոն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 3-Ն հրամանի:

12. Ձևաբանական հետազոտության նմուշները պացիենտի կամ նրա ծնողի կամ ամուսնու կամ երեխաների կամ օրինական ներկայացուցչի կամ կոնտակտային անձի պահանջով կարող են տրամադրվել վերջիններիս՝ կրկնակի հետազոտության նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

04.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ